ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2025թ. № 1067

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ԹԻՎ 277 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 18-ի «Սպիտակ համայնքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթի անցկացման մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 277 որոշման 1-ին կետում կատարել փոփոխություններ.

1) «Գայանե Զոբանյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Երեմ Գրիգորյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ» բառերով.

2) «Վարդան Սողոմոնյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ» բառերը փոխարինել «Հենրիկ Իգիթխանյան-Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական» բառերով.

3) «Հովիկ Հարությունյան- ՀՀ Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ սպայական վաշտի 1-ին սպայական դասակի վարչական գործունեության ավագ տեսուչ, ոստիկանության մայոր (ներկայացմամբ)» բառերը փոխարինել «Արամ Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային

ծառայության Լոռու մարզի գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար, ոստիկանության կապիտան (ներկայացմամբ)»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 28
ք. Սպիտակ